


Փաստ. անվանումը	ԵՄՀ ասպիրանտուրայում ուսուցման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-26-01
Հաստատման ամսաթիվը	11/7/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր



Կ Ա Ր Գ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Ասպիրանտուրան հետբուհական կրթության համակարգում գիտամանկավարժական և գիտական բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է, որն իրականացվում են ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՈՀ) «Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկին» համապատասխան մասնագիտություններով:

Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը սովորում է ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելու և կրեդիտային հենքով հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրով համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար:

Երասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ ԵՄՀ) ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, վճարովի հիմունքներով և կրեդիտային համակարգով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3, իսկ հեռակա ուսուցման տևողությունը՝ 4 տարին: Ուսաման ավարտին ասպիրանտն պետք է ունենա 180 կրեդիտ:

ԵՄՀ ասպիրանտուրա մրցութային կարգով ընդունվում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ԵՄՀ ասպիրանտուրա են ընդունվում միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը ներկայացվում է ԵՄՀ ռեկտորի անունով, կցելով ներքոհիշյալ փաստաթղթերը.

- Դիմում,
- Կադրերի հաշվառման անձնական թերթ, ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),
- Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,
- Բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի պատճենները,
- Ընտրված մասնագիտությունից գիտական ռեֆերատ՝ /ակնարկվող թեմայից/, առնվազն 20 տպագրական էջ կամ հրատարակված գիտական աշխատություններ (նվազագույնը՝ 0.5 մամուլ ծավալով),
- Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե աշխատում է)

Դիմորդն անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմը ներկայացնում է անձամբ:

ԵՄՀ ռեկտորի հրամանով ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում է ընդունող հանձնաժողով:

Ասպիրանտուրա ընդունվողները հանձնում են քննություններ՝ մասնագիտական առարկայից, օտար լեզվից (անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն) և «Համակարգչից օգտվելու հիմունքներ» առարկայից:

- անգլերեն լեզու- «Toefl» (iBT) ստորին անցումային միավորին համապատասխան,
- գերմաներեն և ֆրանսերեն լեզուներ- «on Daf» և «TCF» պահանջներին համապատասխան մակարդակով:
- «Համակարգչից օգտվելու հմտություններ»- համակարգչից օգտվելու հմտությունների ծրագրերի նվազագույն մակարդակի պահանջներին համապատասխան:

Յուրաքանչյուր տարվա նոյեմբերի վերջին տասնօրյակում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հրապարակում է տվյալ տարվա ընդունելության համար առարկայական անցումային շեմը՝ ըստ մասնագիտությունների:

Գործերն հանձնելիս դիմորդն պարտավոր է վերոգրյալ փաստաթղթերի հետ միասին ներկայացնել նաև ստուգարքի արդյունքները:

Մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը ասպիրանտուրա ընդունվողին տալիս է ԵՄՀ ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներ առարկայից տարբերակված ստուգարքների դրական արդյունքների և ներկայացված գիտական ռեֆերատի վերաբերյալ մասնագիտական ամբիոնի կամ գիտական ստորաբաժանման կողմից գրավոր դրական գրախոսականի դեպքում:

Օտար լեզվից ստուգարքները ՀՀ-ում կազմակերպվում են այն կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան թույլտվություն: Ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքի ծրագիրը և հարցաշարը կազմում է ՀՀ կրթության և գիտության նախարարության ստեղծված առարկայական հանձնաժողովի կողմից:

Ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հմտություններ առարկաների ստուգարքներն անցկացնում են ԿԳՆ կողմից հաստատված կազմակերպությունները:

Մասնագիտական քննության հարցաշարը ընդգրկում է առնվազն 100 հարց և դրանք պետք է արտահայտվեն նվազագույնը 25 տոմսերում:

Մասնագիտական քննությունից բավարար գնահատական ստացած դիմորդները զրկվում են ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Մրցույթների անցկացման ընթացքում մասնագիտական առարկաներից հավասար միավորներ հավաքած դիմորդների նկատմամբ կիրառվում է հետևյալ չափանիշները.

- օտար լեզվից և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (գումարային ձևով),
- հրատարակված գիտական աշխատանքների քանակը,
- մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,
- մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության և դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,
- միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթների կամ օլիմպիադաների ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը:

Ընդունելության քննությունների վերահանձնում չի թույլատրվում: Ասպիրանտուրա ընդունելության քննությունների արդյունքներն ուժի մեջ են հաջորդ տարվա ընդունելության քննությունների ընթացքում:

Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է.

- հանձնի որակավորման քննություններ՝ ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգին համապատասխան,
- ունենա ԵՄՀ գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան և առնվազն 36 ժամ մանկավարժական ծանրաբեռնվածություն:

Ասպիրանտների ընդունման օրվանից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում հաստատվում են ատենախոսության թեման և գիտական ղեկավարը համաձայն ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգի:

Գիտական ղեկավար, որպես կանոն, կարող է լինել ԵՄՀ աշխատող գիտությունների դոկտորը կամ նախարարության սահմանած կարգով ԲՈՀ-ի թույլտվության դեպքում՝ գիտությունների թեկնածուն: Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ:

Ասպիրանտների գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է ԵՄՀ կանոնադրություններով սահմանված կարգով (մեկ ասպիրանտի համար վճարելով առնվազն 50 ժամ հաշվարկով): ԵՄՀ ռեկտորն իրավունք ունի ասպիրանտների գիտական ղեկավարների համար արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանելու աշխատավարձին հավելավճար:

Առկա ասպիրանտուրայում ուսանելու ժամանակը մտնում է ասպիրանտների գիտամանկավարժական ստաժի մեջ:

Ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի ամեն տարի հաշվետվության հիման վրա ատեստավորվում է ամբիոնի կողմից:

Առկա ուսոցմամբ ասպիրանտներին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ: